ԼՐԱՏՈՒ
Թիվ 2| Նոյեմբեր 2022 թ.

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԾՐԱԳՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Անգլերենը՝ հատուկ նպատակների համար, և ԿՓԵՀ/ թյունինգի մոդուլային ուսուցման համակարգը» խորագրով վերապատրաստում Պորտուի կաթոլիկ համալսարանում՝ հիբրիդային ձևաչափով

Հունվարի 16-ից 22-ը Պորտուի կաթոլիկ համալսարանում կայացավ SMARTI ծրագրի շրջանակներում կազմակերպված «Անգլերենը՝ հատուկ նպատակների համար, և ԿՓԵՀ/ թյունինգի մոդուլային ուսուցման համակարգը» խորագրով մեկշաբաթյա վերապատրաստում՝ հիբրիդային ձևաչափով: Հանդիպմանը ողջույնի խոսքով հանդես եկան հյուրընկալող համալսարանի դասախոս, ծրագրի աշխատանքային առաջին և չորրորդ փաթեթների ղեկավար Էդուարդո Կարդոսոն և ծրագրի համակարգող, Դրեզդենի տեխնոլոգիական համալսարանի ներկայացուցիչ Ջերարդ Քալենը:

Վերապատրաստումներին մասնակցում էին ծրագրի գործընկեր համալսարանների և կազմակերպությունների ներկայացուցիչներ Եվրոպայից, Ռուսաստանի Դաշնությունից և Հայաստանից: Վերապատրաստումներն իրականացնում էին Ջերարդ Քալենը և Սվեն Ռիդդելը՝ Դրեզդենի տեխնոլոգիական համալսարանից, Էդուարդո Կարդոսոն, Թիմ Հոգը՝ Պորտուի կաթոլիկ համալսարանից, պրոֆեսորներ Մորին Ռոյսը, Ռայան Ուին-Ուիլիամսը, Քեյսի Բոմոնտը՝ Լիվերպուլի Ջոն Մուրսի համալսարանից, և Եվա Ցիմելեն, Մարիա Պլատոնովան, Տատյանա Սմիռնովան՝ Ռիգայի տեխնիկական համալսարանից:

Վերապատրաստման դասընթացները հագեցած էին տեսական նյութով ու գործնական աշխատանքներով, որոնք հիմնականում իրականացվում էին խմբային ակտիվ քննարկումներով: Վերապատրաստման թեմաները գլխավորապես առնչվում էին ակադեմիական գրավոր խոսքի տեսակներին և առանձնահատկություններին, անգլերենով դասավանդելու նորարարական մեթոդաբանությանը, ուսանողակենտրոն ուսուցման ռազմավարությանը, մոդուլների մշակմանը, կրթական վերջնարդյունքների ձևակերպմանը, Բլումի աստիճանակարգության կիրառմանը և գիտելիքների չափանիշահեն գնահատմանը:

Ծրագրի շրջանակներում նախատեսված է անցկացնել մի շարք վերապատրաստումներ գործընկեր բուհերում դասընթացի տրամադրած նյութերի հիման վրա:

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՆԳԼԵՐԵՆՈՎ ԴԱՍԱՎԱՆԴԵԼՈՒ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆԸ, ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻՆ ԵՎ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԻ ԿԻՐԱՌՄԱՆԸ՝ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ ԲԱՐԵԼԱՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ

Ծրագիրը ֆինանսավորել է Եվրոպական հանձնաժողովը: Սույն լրատուն արտացոլում է միայն հեղինակ(ներ)ի տեսակետները, և հանձնաժողովը պատասխանատու չէ դրանում տեղ գտած տեղեկության օգտագործման համար:

PAARA; GSU; VSU SMARTI PAARA SMARTI SMARTI

SMARTI

Co-funded by the Erasmus+ Programme of the European Union

«ԱՆԳԼԵՐԵՆԸ՝ ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ, ԵՎ ԿՓԵՀ / ԹՅՈՒՆԻՆԳԻ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ» ԽՈՐԱԳՐՈՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ՀՀ ՊԿԱ-ՈՒՄ

2022 թ. մարտի 30-ին ՀՀ պետական կառավարման ակադեմիայում մեկնարկեց հունվարի 17-ից 22-ը Պորտուգալիայի կաթոլիկ համալսարանում SMARTI ծրագրի շրջանակում «Անգլերենը՝ հատուկ նպատակների համար, և կրեդիտների փոխանցման եվրոպական համակարգ» խորագրով անցկացված վերապատրաստման հիման վրա մշակված դասընթացաշարը: Այն ներառում էր ինտերակտիվ վեց դասընթացներ (երեք տեսական և երեք գործնական):

Առաջին երկու դասընթացները կայացան մարտի 30-ին և ապրիլի 1-ին: Դասընթացաշարը կազմակերպել էին ՀՀ ՊԿԱ միջազգային համագործակցության և զարգացման կենտրոնի ղեկավար, ծրագրի հայաստանյան գործընկեր հաստատությունների համակարգող Թերեզա Խեչոյանը և նույն կենտրոնի ղեկավարի տեղակալ, ծրագրի թիմի անդամ Տաթևիկ Մովսիսյանը:

Վերապատրաստման դասընթացների մասնակիցներին ողջունեց ՀՀ ՊԿԱ ռեկտոր Խաչատուր Ղազեյանը: Իր խոսքում նա շեշտեց վարչական և պրոֆեսորադասախոսական կազմերի կարողությունների հզորացմանը միտված նմանատիպ վերապատրաստումների նշանակությունը, ինչպես նաև կարևորեց SMARTI-ի դերը ծրագրի հայաստանյան բուհերի միջազգայնացումը խթանելու գործում՝ ԱԴՄ (Անգլերենը՝ որպես դասավանդման միջոց) կենտրոնների հիմնման միջոցով:

Տեսական դասի ընթացքում ակադեմիական գրագիտության, մասնավորապես՝ ակադեմիական անգլերենով գիտական աշխատանքներ գրելու վերաբերյալ դասախոսությամբ հանդես եկավ ծրագրի թիմի անդամ, անգլերենով դասավանդող դասախոս Խաչատուր Բեզիրջյանը: Դասախոսության շրջանակում քննարկվեցին գրագողությանը, գիտահետազոտական մեթոդաբանությանը, ինչպես նաև հետազոտական աշխատանքների կառուցվածքին առնչվող հարցեր:

Մեծ լսարանը (դասախոսներ, վարչական աշխատակիցներ և ուսանողներ) խանդավառված էր անգլերենով որակյալ զեկույցներ ու հետազոտական աշխատանքներ գրելու և ներկայացնելու նոր հմտություններ սովորելու հնարավորությամբ: Նախորդ դասին մասնակիցներին հանձնարարվել էր սահիկաշարեր պատրաստել ակադեմիական անգլերենի կիրառումը կատարելագործելու նպատակով: Ապրիլի 1-ին կայացած գործնական դասի ընթացքում մասնակիցների ներկայացրած սահիկաշարերի թիվը ցուցիչն էր այն բանի, որ լսարանը մեծապես հետաքրքրված էր ակադեմիական անգլերենի կատարելագործման հնարավորությամբ:

Մանրամասները՝ հղմամբ:

«Անգլերենը՝ հատուկ նպատակների համար, եվ ԿՓԵՀ / թյունինգի մոդուլային ուսուցման համակարգ» խորագրով վերապատրաստում ՎՊՀ-ում

Մարտի 28-ից ապրիլի 9-ը Վանաձորի պետական համալսարանում մեկնարկեց Էրազմուս+ SMARTI ծրագրի շրջանակներում «Անգլերենը՝ հատուկ նպատակների համար (ԱՀՆ), և ԿՓԵՀ/ թյունինգի մոդուլային ուսուցման համակարգը» խորագրով ներբուհական վերապատրաստման դասընթացաշարը՝ համահունչ նախատեսված վերջնարդյունքներին: Երեք ժամ տևողությամբ դեմ առ դեմ նիստերը՝ նվիրված ԱՀՆ և ԱԴՄ ծրագրերի մեթոդաբանությանը և թյունինգի մեթոդաբանության առաջնային մոտեցումներին, թյունինգ նախագծին, ԿՓԵՀ-ի հիմնական առանձնահատկություններին, Բլումի վերանայված աստիճանակարգմանը, ինչպես նաև ակադեմիական գրագիտության առանձնահատկություններին, գլխավորապես հիմնված էին Պորտուի Պորտուգալիայի կաթոլիկ համալսարանում 2022 թ. հունվարի 16-22-ն անցկացված մոդուլային վերապատրաստման ընթացքում տրամադրված նյութերի վրա: Դասընթացները վարեցին ծրագրի տեղական համակարգող, օտար լեզուների և գրականության ամբիոնի դոցենտ Լուսիկ Վարդանյանը և ծրագրի աշխատակից, մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոնի ասիստենտ Նունե Խուբլարյանը:

Ապրիլի 3-9-ին կազմակերպված եռօրյա վերապատրաստման դասընթացի հիմնական թեմաները վերաբերում էին թյունինգի մեթոդաբանության առաջնային մոտեցումներին, թյունինգ նախագծին, ECTS-ի հիմնական առանձնահատկություններին, ինչպես նաև Բլումի վերանայված աստիճանակարգմանը: Սեմինարների ընթացքում մասնակիցների ակտիվ ներգրավվածությունը քննարկումներում աշխուժացրեց «ակադեմիական մթնոլորտը» և զգալիորեն օգնեց հաղթահարել լեզվական խոչընդոտները, որոնք սկզբում բավականին անհաղթահարելի էին թվում հատկապես անգլերենի ոչ այնքան բարձր մակարդակ ունեցող մասնակիցների համար: Դասընթացի մասնակիցները, անկասկած, հարստացրին արդյունավետ սահիկաշարեր պատրաստելու, տարբեր գծապատկերներ ներկայացնելու և դրանք մեկնաբանելու իրենց գիտելիքներն ու հմտությունները, բացահայտեցին հիմնական տարբերությունները պաշտոնական և ոչ պաշտոնական գրագրության, մասնավորապես՝ ուղեկցող նամակների տեսակների միջև:

Դասընթացը հիանալի հնարավորություն էր նաև կիսվելու այնպիսի գիտելիքներով և պատկերացումներով, որոնք առնչվում են 21-րդ դարի կրթական համակարգի հիմնական առաջնահերթություններին, հատկապես այն միջոցներին, որոնք հնարավոր են դարձնում ցածր կարգի մտածողության հմտություններից (LOTS) անցումը բարձր կարգի մտածողության հմտություններին (HOTS):

Կարելի է միանշանակ փաստել, որ դասընթացից ակնկալվող արդյունքն ստացվեց թիմային բարձր ոգու և փոխզիջման շնորհիվ: Հենց այս ոգին է, որ դասընթացի ողջ գործընթացը սահուն և հաճելի դարձրեց բոլոր մասնակիցների համար:

«ԱՆԳԼԵՐԵՆԸ՝ ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ, ԵՎ ԿՓԵՀ / ԹՅՈՒՆԻՆԳԻ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ» ԽՈՐԱԳՐՈՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ՀԱԱՀ-ՈՒՄ

Մարտի 28-ին ՀԱԱՀ-ում մեկնարկեց ներբուհական դասընթացների շարք՝ հիմնված Պորտու քաղաքի Պորտուգալիայի կաթոլիկ համալսարանում հունվարի 17-21-ը Դրեզդենի տեխնիկական համալսարանի, Ռիգայի տեխնիկական համալսարանի և Լիվերպուլի Ջոն Մուրսի անվան համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի իրականացրած դասընթացների վրա:

ՀԱԱՀ-ում դասընթացները վարեց SMARTI ծրագրի հետազոտող, դասախոս Արա Ամիրյանը: Յուրաքանչյուր դասընթաց տևեց երեք ժամ, որին մասնակցում էին համալսարանի ներիքն շահակիցները: Հանդիպումներն ավարտվեցին ապրիլի 8-ին:

Ինչպես գործընկեր մնացյալ բոլոր համալսարաններում, ՀԱԱՀ-ում ևս քննարկումներն իրականացվում էին «Անգլերենը՝ հատուկ նպատակների համար, և կրեդիտների կուտակման ու փոխանցման եվրոպական համակարգ/ թյունինգի մոդուլային ուսուցման համակարգ» թեմայով: Դասընթացների մասնակիցները հնարավորություն ստացան հմտանալու սահիկաշարեր պատրաստելու, մոտիվացիոն և ուղեկցող նամակներ գրելու առումով, ինչպես նաև հարստացրին իրենց գիտելիքները ԿՓԵՀ-ի, ուսումնական պլանի նախագծման և օտար լեզուների իմացության մակարդակների մասին:

Դասընթացի բոլոր մասնակիցները ստացան պրն. Ամիրյանի կողմից փոփոխված ներկայացումները:

Մանրամասները՝ հղմամբ:

«ԱՆԳԼԵՐԵՆԸ՝ ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ, ԵՎ ԿՓԵՀ / ԹՅՈՒՆԻՆԳԻ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ» ԽՈՐԱԳՐՈՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ՇՊՀ-ՈՒՄ

Մարտի 24-ից ապրիլի 25-ը ՇՊՀ-ում անցկացվեցին ներբուհական վերապատրաստումներ, որոնց մասնակցեցին բուհի 35 աշխատակիցներ:

Ներբուհական սեմինարները վարեցին Պորտուգալիայի կաթոլիկ համալսարանում վերապատրաստված ՇՊՀ մասնագետները և ծրագրի ՇՊՀ համակարգող Հովիկ Մելքոնյանը:

Մարտի 24-25-ին «Անգլերենը՝ հատուկ նպատակների համար, և կրեդիտների կուտակման ու փոխանցման եվրոպական համակարգ/ թյունինգի մոդուլային ուսուցման համակարգ» թեմայով դասընթացաշարը վարեց ՇՊՀ-ի անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի դասախոս Հասմիկ Մատիկյանը:

Ապրիլի 7-8-ը ՇՊՀ-ում տեղի ունեցավ վերապատրաստումների 2-րդ փուլը:

«ՈՒԹՀՎ-ն՝ որպես կազմակերպության և անձի ինքնավերլուծության և ինքնաճանաչման միջոց» թեմայով վերապատրաստումն անցկացրեց Հովիկ Մելքոնյանը:

Դասընթացաշարի վերջին հանդիպումը, որը միտված էր կրթական ծրագրերի և առանձին դասընթացների/մոդուլների վերջնարդյունքների սահմանմանը և ԿՓԵՀ-ի առանձնահատկություններին, ՇՊՀ-ում անցկացվեց ապրիլի 13-14-ին: Այն վարեց SMARTI ծրագրի աշխատանքային խմբի անդամ, ՇՊՀ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի տնօրեն, պրոռեկտորի ՊԿ Նազելի Ավետիսյանը:

Ապրիլի 28-ին ՇՊՀ-ում ամփոփվեց ներբուհական վերապատրաստումների շարքը, մասնակիցներին շնորհվեցին վկայականներ:



«ԱՆԳԼԵՐԵՆԸ՝ ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ, ԵՎ ԿՓԵՀ / ԹՅՈՒՆԻՆԳԻ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ» ԽՈՐԱԳՐՈՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԳՊՀ-ՈՒՄ

Ս. թ. մարտի 29-ից ապրիլի 14-ը ԳՊՀ–ում անցկացվեց «Անգլերենը՝ հատուկ նպատակների համար, և կրեդիտների կուտակման ու փոխանցման եվրոպական համակարգ/ թյունինգի մոդուլային ուսուցման համակարգ» խորագրով ներբուհական վերապատրաստումների դասընթացը՝ նախատեսված ԳՊՀ–ի ինչպես պրոֆեսորադասախոսական ու վարչական աշխատակազմերի ներկայացուցիչների, այնպես էլ ուսանողների համար:

Դասընթացը վարում էին ծրագրի շրջանակում Պորտույի կաթոլիկ համալսարանում վերապատրաստված ԳՊՀ դասախոսներ Նաիրա Սաֆարյանը, Նաիրա Մեժլումյանը, Լիլիթ Աթաբեկյանը, ինչպես նաև Սոնա Ալավերդյանը:

Դասընթացներն ընդգրկում էին թեմաների լայն շրջանակ, ինչպիսիք են «Հաջող սահիկաշարի պատրաստում և ներկայացում», «Ուղեկցող և մոտիվացիոն նամակ», «Վիճակագրական հաշվետվություն և նպատակահարմար լեզու՝ գծապատկերների համար», «ԿՓԵՀ/ թյունինգի շրջանակի ներդրում և կիրառում», «ԿՓԵՀ և Եվրոպական բարձրագույն կրթության տարածք», «ԿՓԵՀ և շարունակական կրթություն» «ԿՓԵՀ՝ ուսումնական ծրագրի մշակման, իրականացման և մշտադիտարկման համար», «Ուսումնառության արդյունքներ, ուսուցման և ուսուցումնառության նորարարական մեթոդաբանություն և գնահատում», «ԿՓԵՀ և որակի ապահովում» և «ԱԴՄ ուսանողակենտրոն, արդյունավետ ու հաջողակ ծրագրի ստեղծում»:

Յուրաքանչյուր տեսական դասընթացին հետևում էր գործնական պարապմունքը՝ հիմնված գիտելիքների կիրառման և դրանց ներկայացման համար նախատեսված առաջադրանքների վրա, ապա ծավալվում էին քննարկումներ:

Հարկ է նշել, որ աշխատանքային լեզուն անգլերենն էր, որը մարտահրավերային էր վերապատրաստվողների համար, քանի որ դասընթացին մասնակցության նախապայմաններից մեկը անգլերենի A1 մակարդակի իմացությունն էր:

Դասընթացի վերջին օրը վերապատրաստումը հաջողությամբ անցած մասնակիցներին տրվեցին հավաստագրեր՝ հաստատված ԳՊՀ-ի և SMARTI ծրագրի կողմից: ԳՊՀ ռեկտորի պարտականությունները կատարող Թ. Մարությանը շնորհավորեց դասընթացի մասնակիցներին հաջող արդյունքների համար և հույս հայտնեց, որ ձեռք բերված փորձը լավագույնս կկիրառվի կրթական գործընթացներում:

ԾՐԱԳՐԻ ՂԵԿԱՎԱՐ ԽՄԲԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԼԻՎԵՐՊՈՒԼԻ ՋՈՆ ՄՈՒՐՍԻ ԱՆՎԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

2022 թ. ապրիլի 19-21-ը Լիվերպուլի Ջոն Մուրսի անվան համալսարանում տեղի ունեցավ SMARTI ծրագրի ղեկավար խմբի հանդիպումը, որին մասնակցում էին ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր Խ. Ղազեյանը և միջազգային համագործակցության և զարգացման կենտրոնի ղեկավար Թ. Խեչոյանը:

Քննարկվեցին ծրագրի շրջանակում ցայսօր կատարված աշխատանքները, առաջ եկած խնդիրները և անելիքները:

Թ. Խեչոյանը ներկայացրեց SMARTI կոնսորցիումի հայաստանյան գործընկեր հաստատությունների կատարած աշխատանքները, որը բարձր գնահատեցին ներկաները:

Ծրագրի հաջորդ գործողությունը՝ ուսումնական մոդուլների պատրաստման գծով դասընթացը, տեղի կունենա Լիվերպուլի Ջոն Մուրսի անվան համալսարանում սեպտեմբերի առաջին երկու շաբաթների ընթացքում, իսկ ծրագրի իրազեկման ազգային միջոցառումները՝ հայաստանյան գործընկեր հաստատություններում՝ հոկտեմբերին:

Մանրամասները՝ հղմամբ:

ԾՐԱԳՐԻ ՂԵԿԱՎԱՐ ԽՄԲԻ ՀԻԲՐԻԴԱՅԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ, ԵՎ «ԱՆԳԼԵՐԵՆԸ՝ ՈՐՊԵՍ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԻՋՈՑ» ԽՈՐԱԳՐՈՎ ՍԵՄԻՆԱՐ

Ծրագրի շրջանակում մինչ այժմ իրականացված աշխատանքները վերլուծելու, հայաստանյան բուհերի հանդիպումների արդյունքներն ամփոփելու, առկա մարտահրավերներն ու դրանց հաղթահարման ճանապարհային քարտեզը հստակեցնելու և տեխնիկական մի շարք հարցեր քննարկելու նպատակով սեպտեմբերի 27-30-ը տեղի ունեցավ ՀՀ ՊԿԱ և ծրագրի մասնակից հայաստանյան մյուս հաստատությունների ներկայացուցիչների հանդիպումը, որը կազմակերպված էր հիբրիդային եղանակով: Այդ կապակցությամբ ՀՀ ՊԿԱ-ն հյուրընկալել էր Դրեզդենի տեխնոլոգիական համալսարանի ներկայացուցիչ, SMARTI ծրագրի ղեկավար Ջերարդ Քալենին և նույն համալսարանի դասախոս Կատյա Ուլմանին: Սեպտեմբերի 28-ին Ջերարդ Քալենը հանդես եկավ դասախոսությամբ: Նույն օրը առցանց դասախոսություն կարդացին նաև նույն համալսարանի դասախոսներ Անդրեա Ստուբենռուչը և Սվեն Ռիդելը:

Հանդիպումը մեկնարկեց ՀՀ ՊԿԱ ռեկտոր Խ. Ղազեյանի բացման խոսքով: Որպես տեղական համակարգող բուհի ռեկտոր՝ նա ողջունեց մասնակիցներին և արգասաբեր աշխատանք մաղթեց:

Եռօրյա հանդիպման առաջին օրը ծրագրի հայաստանյան ներկայացուցիչները ներկայացրին ծրագրի շրջանակում մինչ օրս կատարված աշխատանքները: Հաջորդ օրը՝ սեպտեմբերի 28-ին, տեղի ունեցավ «Անգլերենը՝ որպես դասավանդման միջոց» խորագրով սեմինար:

ՀՈԴՎԱԾ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԽՈՍՎՈՂ ԱՄՍԱԳՐՈՒՄ

Ծրագրի մասին տեղեկության տարածման և դրա վերջնարդյունքների գործնական կիրառման համար արդյունավետ էր ԳՊՀ-ից Ն. Սաֆարյանի, ՎՊՀ-ից Լ. Վարդանյանի և ՀՀ ՊԿԱ-ից Տ. Մովսիսյանի համագործակցությունը, ինչի շնորհիվ համահեղինակությամբ գրված հոդված է տպագրության ներկայացվել ՄԹ-ի «Թեյլոր ընդ Ֆրենսիս» հրատարակչության «Բարձրագույն կրթության որակ» (Quality in Higher Education (CQHE), Taylor & Francis) ամսագրին: Հոդվածը գրախոսվել է և հաստատվել տպագրության 2023 թ. հունվարի հատուկ թողարկման մեջ: Հոդվածի վերնագիրն է «Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում անգլերենով դասավանդման որոշ հարցեր՝ հիմնված Էրազմուս+ SMARTI ծրագրի ուսումնասիրությունների վրա» (On some issues about English medium instruction in Armenian higher education institutions: based on the desk and field study of the Erasmus+ SMARTI Project):

ԱԴՄ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ՎՊՀ-ում ԱԴՄ կենտրոնի պաշտոնական բացումը

Էրազմուս+ SMARTI ծրագրի կարևորագույն կետերից մեկը ԱԴՄ կենտրոնների ստեղծումն է գործընկեր բուհերում, որոնք ամուր հիմք կծառայեն ԱԴՄ գործունեության մեթոդների, տեխնիկայի և ռազմավարության արդյունավետ իրականացման, կազմակերպման և բովանդակավորման համար:

ՎՊՀ ԱԴՄ կենտրոնը գործարկվեց 2022 թ. սեպտեմբերի 29-ին: Բացման արարողությանը ողջույնի խոսքով հանդես եկան ՎՊՀ ռեկտոր Ռուստամ Սահակյանը, SMARTI ծրագրի ղեկավար Ջերարդ Քալենը, ծրագրի ՎՊՀ համակարգող Լ. Վարդանյանը, հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան Մարիա Բրուտյանը և Էրազմուս+ ազգային գրասենյակի ներկայացուցիչ Վարդ Ղուկասյանը: Միջոցառմանը ներկա էին Դրեզդենի տեխնիկական համալսարանի պրոֆեսոր Կատյա Ուլմանը, ՎՊՀ վարչական և ակադեմիական անձնակազմը, ինչպես նաև բակալավրի և մագիստրատուրայի ուսանողներ:

ԱԴՄ կենտրոնը համալրված է տեխնիկական այնպիսի միջոցներով, որոնք նպաստում են միջոցառումների սահուն իրականացմանը, բարձրագույն կրթության չափանիշների բարձրացմանը և «Ծրագրային ճարտարագիտություն» մագիստրոսական և «Անգլերեն լեզու և գրականություն» բակալավրիատի ծրագրերի միջազգայնացմանը: Այդ կենտրոնի նպատակն է կազմակերպել վերապատրաստման դասընթացներ և կանոնավոր խորհրդատվություններ մասնագիտական առարկաներ դասավանդող դասախոսների համար, որոնցից ակնկալվում է ակադեմիական առարկաների դասավանդումը անգլերենով՝ շեշտը դնելով ուսանողակենտրոն ուսուցման մեթոդաբանության և հետազոտության, ինչպես նաև ուսուցման նորարարական մոտեցումների վրա: ԱԴՄ կենտրոնը նաև նպատակ ունի խթանելու ուսանողների, վարչական և ակադեմիական անձնակազմի՝ անգլերեն լեզվի իմացության մակարդակը՝ դրանով իսկ նպաստելով ԱԴՄ դասընթացների և մոդուլների սահուն իրականացմանը:

ԾՐԱԳՐԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԸ

©2016 1lurer

Հայաստանի ազգային ագրարային համալսարանը հանրապետության խոշոր բուհերից մեկն է և ագրարային ոլորտի բարձրագույն ուսումնական միակ հաստատությունը: Որպես Հայկական գյուղատնտեսական ակադեմիա՝ կազմավորվել է 1994 թ. Հայկական գյուղատնտեսական և Երևանի անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտների միավորման արդյունքում, որոնք հիմնադրման օրվանից (1930 թ.) բացառիկ դեր են խաղացել ինչպես հանրապետության ագրարային ոլորտի զարգացման, այնպես էլ նախկին Խորհրդային Միության հանրապետությունների համար որակյալ մասնագետների պատրաստման ու գիտական բազմաբնույթ հետազոտությունների իրականացման գործում:

Մանրամասները՝ հղմամբ:

Շիրակի պետական համալսարանը Շիրակի մարզի ուսումնագիտական և մարզամշակութային ամենախոշոր կենտրոնն է: Հայաստանի հյուսիսի ամենամեծ համալսարանը հիմնադրվել է 1934 թ.՝ որպես Լենինականի մանկավարժական ինստիտուտ: 2016 թ. Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտը վերակազմավորվել և դարձել է Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան: Բուհը 2016 և 2022 թթ. անցել է ինստիտուցիոնալ հավատարմագրում և ստացել համապատասխան վկայական:

Այսօր Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանն ունի 3 ֆակուլտետ, մասնագիտական 11 ամբիոն: Մանրամասները՝ հղմամբ:

©2014 Շիրակի մարզպետարան

Նախատեսված միջոցառումներ

ԱԴՄ ՄՈԴՈՒԼՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԼԻՎԵՐՊՈՒԼԻ ՋՈՆ ՄՈՒՐՍԻ ԱՆՎԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ (2023 Թ. ԱՊՐԻԼ)

ԱԴՄ մոդուլներին նվիրված վերապատրաստումը SMARTI ծրագրի կարևոր վերջնարդյունքներից մեկն է, որը տեղի կունենա ՄԹ Լիվերպուլի Ջոն Մուրսի համալսարանում 2023 թ. ապրիլի առաջին երկու շաբաթվա ընթացքում:

Վերապատրաստումը գիտելիքներ կհաղորդի ԱԴՄ տասը մոդուլների մասին, որոնք ի վերջո կդառնան ծրագրի գործընկեր համալսարանների ուսումնական պլանի մաս: Դրանից հետո գործընկեր յուրաքանչյուր համալսարան կսկսի մշակել ԱԴՄ մոդուլներ ԱԴՄ սեփական ծրագրի համար: Վերապատրաստումը կմանրամասնի այնպիսի մոդուլների մասին, ինչպիսիք են հաղորդակցական (ուսանողակենտրոն) մոտեցում և տեղեկատվական հաղորդակցության տեխնոլոգիաներով (առցանց) ուսուցման ռազմավարություն, ԱԴՄ բանավոր միջոցներ, ԱԴՄ հետազոտական և գրավոր հմտություններ, ԱԴՄ մոդուլային ուսումնական պլանի մշակում և ուսումնական դիզայն, ԱԴՄ ուսանողների գնահատման ռազմավարություն (ֆորմալ և այլընտրանքային գնահատումներ) և այլն:



ԱՆՆԱ ՄԱՐՏԻԿՅԱՆ

- Հայկական AIDA խմբի անդամ
- ՇՊՀ արտաքին համագործակցության և հանրային կապերի կենտրոնի մասնագետ
- SMARTI ծրագրի հանրայնացման մասնագետ

ԳԱՅԱՆԵ ՔԱՆԱՐՅԱՆ

- Հայկական AIDA խմբի անդամ
- SMARTI ծրագրի հանրայնացման մասնագետ
- ՎՊՀ մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոնի դոցենտ

ԼՈՒՍԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

- SMARTI ծրագրի տեղական համակարգող
- Հայկական AIDA խմբի անդամ
- ՎՊՀ օտար լեզուների և գրականության ամբիոնի դոցենտ

ՍՈՆԱ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

- Հայկական AIDA խմբի անդամ
- SMARTI ծրագրի հանրայնացման մասնագետ
- ԳՊՀ արտաքին կապերի և համագործակցության բաժնի մասնագետ

ՍՈՒՍԱՆՆԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

- Հայկական AIDA խմբի ղեկավար
- ՀԱԱՀ ագրոտեխնոլոգիական ինկուբատոր ծրագրերի համակարգող
- ՀԱԱՀ միջազգային հարաբերությունների բաժնի առաջատար մասնագետ



ՏԱԹԵՎԻԿ ԴԱՆԻԵԼՅԱՆ

- Հայկական AIDA խմբի անդամ
- ՀՀ ՊԿԱ միջազգային համագործակցության և զարգացման կենտրոնի գլխավոր մասնագետ

ԵԼԵՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

- SMARTI ծրագրի հանրայնացման մասնագետ
- ՈԱԱԿ հասարակայնության հետ կապերի պատասխանատու

ՀԱՅԿԱԿԱՆ AIDA ԽՈՒՄԲԸ

SMARTI ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄ

Coordinator

TECHNISCHE UNIVERSITÄT DRESDEN

Partners

RIGA TECHNICAL UNIVERSITY · LIVERPOOL JOHN MOORES UNIVERSITY · CATOLICA FACULTY OF BIOTECHNOLOGY · OGAREV MORDOVIA STATE UNIVERSITY · Kazan Federal UNIVERSITY · ANQA